

**«ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԵՐԸ  
ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ  
Գրիգորյան Վ. Վ.**

Դպրոցական աշխարհագրությունը ունի բացառիկ կրթական և դաստիարակչական նշանակություն: Աշխարհագրությունը, ուսումնասիրելով տնտեսական երևույթները և հասարակական գործընթացները, դրանց տարածական տեղաբաշխումը և փոխազդեցությունները, ընդլայնում է սովորողների աշխարհայացքը, մտահորիզոնը՝ այդ երևույթներին և գործընթացներին տալով գիտական բացատրություն:

**Բանալի բառեր.** աշխարհագրական մտահորիզոն, աշխարհագրական դաստիարակություն, մասնագիտական դաստիարակություն, դինամիկ զարգացում, հայրենագիտություն:

**Խնդրի դրվածքը:** Աշխարհագրությունն առաջին հայացքից բոլորի վրա թողնում է այնպիսի տպավորություն, որ բնության երևույթների մասին հասկացությունները, բնական օբյեկտների անուններն ու թվային տվյալները, սոցիալ-տնտեսական ցուցանիշներն ու պետությունները իրենց մայրաքաղաքներն իմանալը աշխարհագրությունն է: Բայց իրականում այն այդպես չէ: Սկզբունքորեն այն երկրագրություն և նկարագրություն է, որն աշխարհագրություն մուտք գործելու սկիզբն է, որը բացում է պատուհան դեպի աշխարհագրության անհուն գաղտնիքները: Մերը դեպի աշխարհագրություն սկսվում է այստեղից:

Յուրաքանչյուր առարկա, դասընթաց, այդ թվում աշխարհագրությունն իր ավանդն ունի սովորողների կրթության, դաստիարակության, գիտական աշխարհայացքի ձևավորման գործում: Միայն աշխարհագրությունն է տալիս գիտական ու ճանաչողական գիտելիքներ բնության երևույթների ու տարրերի մասին: Աշխարհագրության

ուսուցման գործընթացը սահմանում է երեք բաղադրամասերի փոխկապված ու փոխապայմանավորված, մեկը մյուսին լրացնող ու միմյանց վրա փոխներգործող ամբողջություն: Այդ բաղադրամասերն են՝ առարկայի բովանդակությունը, ուսուցչի համալիր գործունեությունը՝ ղեկավարել, սովորեցնել, դաստիարակել և աշակերտի սովորելը: Ուստի աշխարհագրությունն ուսումնասիրելու ընթացքում ուսուցումը և դաստիարակությունը որպեսզի համընթաց ընթանան, անհրաժեշտ է որոշակի պահանջներ ներկայացնել նշված բաղադրամասերից յուրաքանչյուրին և դրանց փոխադարձ գործողություններին [5]:

**Աշխատանքի վերլուծությունը:** Մեր օրերում հայ դպրոցը կանգնած է բարեփոխումների շեմին: Նրա առջև ծառայած են բազմաթիվ չլուծված խնդիրներ՝ ապահովել աշակերտների պատրաստվածությունը մեծ կյանք մտնելու, տալ համակողմանի և կայուն գիտելիքներ, ձևավորել գիտական աշխարհայացք, ապահովել ֆիզիկական, գեղագիտական և բարոյական դաստիարակություն: Աշխարհայացքի հիմքում ընկած են բնության և հասարակության զարգացման օրենքներն ու օրինաչափությունները: Դրան հասնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել կոնկրետ երևույթներ ու օբյեկտներ: Աշխարհագրությունը, օգտագործելով իր առանձնահատուկ բովանդակությունը, բացահայտում է ընդհանուր օրենքներ և օրինաչափություններ, և արդյունքում աշակերտների մոտ ձևավորվում են գիտական հայացքների հիմքերը մի խումբ երևույթների և օբյեկտների վերաբերյալ:

Աշխարհագրության դասընթացը հանրակրթական դպրոցի հենքային առարկաներից է: Իմ խորին համոզմամբ յուրաքանչյուր ժողովրդի ներկայացուցիչ պարտավոր է իմանալ իր մայր լեզուն, գրականությունը, մշակույթը, պատմությունը և աշխարհագրությունը: Այդ համատեքստում ուսումնասիրելով աշխարհագրությունը՝ աշակերտները ծանոթանում են աշխարհի երկրների, այդ թվում՝ մեր հանրապետության բնությանը, բնակչությանը և նրանց տնտեսական գործունեությանը: Աշխարհագրությունը ներկայացնում է երևույթների ու օբյեկտների օրինաչափություններն ու գնահատականը, որոնց հետ սովորողներն առնչվում են իրենց կյանքի ընթացքում՝ ռելիեֆի, ջրային աշխարհի տարբեր օբյեկտների, եղանակի ու նրանում կատարվող անընդհատ փոփոխությունների, կենսաաշխարհի, աշխարհի բնակչության ու տնտեսական գործունեության, մշակութային և քաղաքական իրադարձությունների հետ և այլն:

Ի տարբերություն ուսումնական մյուս առարկաների՝ պատմություն, ֆիզիկա, կենսաբանություն և այլն, աշխարհագրությունը բնությունը դիտարկում է որպես մեկ համալիր՝ ամբողջություն, որում երևույթներն ու օբյեկտները գտնվում են սերտ կապի ու զարգացման մեջ, փոխազդում և փոխներգործում են միմյանց վրա: Աշխարհագրությունը ուսումնասիրում է աշխարհի բնական համալիրների բազմազանությունը և դրանց տեղաբաշխման օրինաչափությունները, դրանց տարբերությունների պատճառները [1]:

Ոչ մի դասընթաց այնպես չի անդրադառնում բնակչության, բնության և տնտեսության գործունեության միջև եղած կապերին, ինչպես աշխարհագրությունը, որի արդյունքում առաջացել են բնական համալիրների վերափոխման խնդիրներ, որի ուսումնասիրմամբ և լուծման հարցերով զբաղվում են «Բնօգտագործում» և «Բնապահպանություն» դասընթացները: Փաստորեն աշխարհագրության դասընթացի խնդիրն է դարձել ձևավորել և ամրապնդել սովորողների գիտական հայացքները բնության և հասարակության երևույթների ու օբյեկտների վերաբերյալ, բացահայտել դրանց գոյության ու զարգացման ընդհանուր օրինաչափությունները: Աշխարհագրության առջև դրված խնդիրներից է նաև բնության և բնակչության տնտեսական գործունեության միջև եղած կապերի բացահայտումը, ներկայացնել զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում բնության նկատմամբ վերաբերմունքը, հասանելի դարձնել սովորողներին բնական միջավայրի դերը հասարակության զարգացման գործում:

Մարդու տնտեսական գործունեության արդյունքում փոխվում է բնությունը նոր որակ ստանալով: Ծանոթանալով այդ ամենին՝ սովորողների մոտ ձևավորվում է համոզմունք, որ բնության դերը մեծ է հասարակության զարգացման գործում, և միևնույն ժամանակ նրանով է պայմանավորված տնտեսական մասնագիտացումը:

Աշխարհագրության ամբողջ դասընթացը ընդգրկում է հանրակրթության բոլոր օղակները՝ 2-12-րդ դասարանները: Տարիքային առանձնահատկություններով պայմանավորված՝ սովորողների մոտ ձևավորում է գիտական հայացքներ բնության երևույթների և հասարակական կյանքի առանձին երևույթների վերաբերյալ: Աշխարհայացքի բաղադրիչներից է նաև աշխարհաճանաչողության մասին կարծիքները: Այդ ամենով պայմանավորված՝ դպրոցական աշխարհագրությունը սովորողներին ծանոթացնում է գիտական հետազոտությունների հիմնական մեթոդներին ու դրույթներին:

Դպրոցականները դրանց ծանոթանում են ուսուցչի կազմած գործնական աշխատանքների միջոցով: Շրջակա միջավայրում կատարվող ինքնուրույն, հետազոտական ու գործնական աշխատանքները ապացուցում են սովորողներին, որ բնության օրինաչափությունները, անկախ մարդուց, գոյություն ունեն իրականության մեջ [4]:

Այսպիսով, սովորողների շրջանում հաստատվում է այն կարծիքը, որ աշխարհագրությունը՝ որպես գիտություն, մշտապես գտնվում է դինամիկ զարգացման մեջ և անընդհատ մշակում ու կատարելագործում է հետազոտության մեթոդները: Միևնույն ժամանակ աշակերտները բնական երևույթներն ու օբյեկտները պետք է ուսումնասիրեն փոխադարձ կապերի մեջ այլ երևույթների ու օբյեկտների հետ, և դրանք անխուսափելիորեն ժամանակի ընթացքում ենթարկվում են ձևափոխման:

Աշխարհագրության դերը չափազանց մեծ է սովորողների հայրենասիրության, գեղագիտական, մարդասիրության և աշխատանքային դաստիարակության գործում: Ուսուցման կազմակերպման ձևերը և բովանդակությունը հնարավորություն են տալիս դաստիարակելու նաև բարոյական և գեղագիտական այնպիսի որակներ, ինչպիսիք են պատասխանատվությունը, ընկերասիրությունը, կոլեկտիվիզմը և այլն: Հայրենիքի մասին գիտելիքներ ստանալը հիմք է հանդիսանում սիրելու ու նվիրվելու հայրենիքին: Այդ գիտելիքները նրանք ստանում են երկրորդ դասարանից սկսած՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկայից, այնուհետև 5-6-րդ դասարաններում՝ հայրենագիտությունից և աշխարհագրությունից: Հայրենասիրության դաստիարակմանը նպաստում են էքսկուրսիաներն ու արշավները: Կարևոր են նաև հայրենագիտական աշխատանքները՝ աշխատանք բնության գրկում՝ ծառատնկում, տարածքների սանիտարական մաքրում, հատկապես պատմամշակութային արժեքների տարածքներում, օգնություն և ուշադրություն մանկատներին, ծերանոցներին, միայնակ ծերերին, հիվանդներին և այլն:

Հայրենագիտությունը տարբեր գիտությունների համալիր է, ամբողջություն, որի գլխավոր և հիմնական խնդիրն է՝ հայրենի բնակավայրի, նրա ռելիեֆի, բնական երևույթների ու օբյեկտների, կլիմայի, հողերի, բուսական և կենդանական աշխարհի, բնակչության տնտեսության, պատմության, մշակույթի և կենցաղի բազմակողմանի ու գիտական իմացությունը [5]:

Լինելով համալիր գիտություն՝ հայրենագիտությունը ներառում է նաև աշխարհագրությունը գրեթե ամբողջությամբ: Հայրենագիտության կարևորության մասին նշել են ժամանակին հայտնի աշխարհագետներ Սաուշկինը, Բարանսկին և այլք: Դպրոցական աշխարհագրության այն դասընթացները, որոնք նվիրված են մեր երկրին, հնարավորություն են տալիս աշակերտներին զինվել հայրենագիտական գիտելիքներով:

Հարագատ բնակավայրն ուսումնասիրելիս սովորողների մեջ սեր է առաջանում նրա բոլոր տարրերի, այնտեղ ապրող մարդկանց գործունեության ու կենցաղի նկատմամբ: Յուրաքանչյուր բնակավայր դառնում է ամենալավն ու ամենասիրելին այնտեղ ապրող մարդու համար: Ամեն մի բնակավայր ունի իր առավելությունները մյուս բնակավայրերի նկատմամբ, ուստի ուսուցիչը պետք է կարողանա իր փորձի ու հմտությունների միջոցով սովորողներին հասցնել հայրենասիրության մոտեցումները:

Հայրենագիտության վերաբերյալ առաջին հիմնարար աշխատանքները վերաբերում են Ղևոնդ Ալիշանին: Խորհրդային վերջին տարիներին հայրենագիտական-հանրագիտարանային անկրկնելի գործ է Հակոբյան Թ., Բարսեղյան Հ., Մելիք-Բախշյան, Սո. «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների» հինգհատորանի բառարանի հրատարակումը: 2018թ.-ին այդպիսի համեմատաբար համեստ հայրենագիտական աշխատանք հրատարակվեց Վ. Վ. Գրիգորյանի և Ս. Ս. Ավետիսյանի համատեղ ուժերով՝ «Հայաստանի հանրապետության բնակավայրերի տեղեկատու»-ն:

Հայրենագիտական աշխատանքները նպաստում են նաև գեղագիտական, ֆիզիկական և աշխատանքային դաստիարակությանը: Աշակերտների աշխատանքը բնակավայրում, բնության գրկում կոփում է օրգանիզմը, ամրապնդում առողջությունը, իսկ այն դժվարություններն ու խոչընդոտները, որոնք հանդիպում են աշխատանքի ընթացքում, հղկում է բնավորությունը, ֆիզիկական կարողությունները ամրանում են, ձևավորվում են աշխատանքային որոշ կարողություններ:

Գեղագիտական դաստիարակությունը անմասն չէ նաև աշխարհագրության դասերին: Այն հատկապես արտացոլվում է էքսկուրսիաների և արշավների ժամանակ: Աշակերտների ուշադրությունը դարձնելով հայրենի բնության անձեռակերտ հուշարձաններին՝ նրանց մեջ ստեղծում է գեղեցիկը, հրաշալին, լավը տեսնելու, հասկանալու, գնահատելու կարողություն: Մեծերից ոմանք ասում են, որ բոլորն են նայում, բայց ոչ բոլորն են տեսնում, այսինքն՝ ուսուցչի

հմտությունը այն է, որ սովորողների շրջանում հասու դարձնի տեսնելու հնարավորությունը: Հայրենագիտական աշխատանքները մեծ հնարավորություն են ստեղծում սովորողների մեջ դաստիարակելու ընկերասիրություն, մարդասիրություն, համախմբվածության, իրար օգնելու, փոխադարձ հարգանքի և այլ վեհ գծեր:

Սովորողների բարոյական դաստիարակության հիմնական կողմերից մեկն էլ հասարակական հանրօգուտ աշխատանքի, հասարակական արժեքների նկատմամբ դաստիարակության խնդիրներն են, սովորողներին հոգեբանորեն նախապատրաստելը աշխատանքին [3]:

Դպրոցական աշխարհագրության դասընթացը աշակերտներին ներկայացնում է բնակչության աշխատանքային գործունեության տարբեր ձևերը, մարդու դերը տնտեսության տարբեր ճյուղերում, նրա նյութական և աշխատանքային միջոցները: Որոշակի խորությամբ ուսումնասիրության արդյունքում սովորողները համոզվում են, որ աշխատանքը ցանկացած երկրի, այդ թվում Հայաստանի Հանրապետության բնակչության կենսամակարդակի, համախառն ներքին արդյունքի, կյանքի որակի բարձրացման գլխավոր պայմանն է: Այստեղ կարևորվում է դեպի արտադրական ձեռնարկություններ էքսկուրսիաներ կատարելը, հատկապես, երբ սովորողները մասնակցություն են ունենում արտադրական գործունեությանը: Խորհրդային տարիներին նմանատիպ կարևոր միջոցառումներ էին սովորողների մասնակցությունը ամռան աշխատանքներին՝ խոտհունձ և խոտահավաք, քարամաքրում, իսկ աշնան սկզբին՝ խաղողի բերքի հավաքման աշխատանքներին: Այս գործընթացում սովորողների համար պայմաններ են ստեղծվում, որ տեսական գիտելիքները կիրառեն գործնականորեն, որը ձևավորում է աշխատանքային կարողություններ և հմտություններ, ապահովում է ուսուցման կապը կյանքի հետ [2]:

**Եզրակացություն:** Այսպիսով, դպրոցական աշխարհագրության աշխարհայացքի ձևավորման գործոնները համարվում են ուսումնական դասընթացի բովանդակությունը: Դպրոցական աշխարհագրության հիմնական բովանդակությունը արտահայտված է առարկայական ծրագրերում և ամբողջությամբ՝ դասագրքերում, որոնք ներառում են այն բոլոր նկատառումները, որոնք կարևորվում են դպրոցականների դաստիարակության գործում:

Դպրոցական աշխարհագրության մեջ առկա են հարցեր, որոնք ուղղակի կապ ունեն աշխարհայացքային եզրահանգումների հետ,

այսպես՝ երկրագնդի կլիմայական մարզերի բազմազանության պատճառների բացահայտումը: Սակայն դրանց կողքին կան նաև այնպիսիք, որոնք աշխարհայացքի հետ անմիջական կապ չունեն, բայց դրանցից հաճախ կախված է աշխարհայացքային բնույթի նյութերի ստացումը, օրինակ՝ քարտեզի իմացությունը: Առանց քարտեզի եությունը իմանալու, առանց դրանից օգտվելու՝ սովորողների աշխարհագրական գիտելիքների զգալի մասը կունենա ձևական բնույթ:

Աշխարհագրական ուսուցման գործընթացում սովորողների դաստիարակության խնդիրը պահանջում է բազմակողմանի հստակ հետազոտություն: Մինչ այժմ դիտարկվել են հնարավորությունները, որոնք ընկած են ուսումնական առարկայի բովանդակության մեջ, հանրակրթական դպրոցի մանկավարժական կոլեկտիվի փորձի հիման վրա բացահայտվել դրական և բացասական կողմերը՝ խնդրի պրակտիկ լուծման ժամանակ, ուսումնասիրվել են աշխարհագրության առաջավոր ուսուցիչների փորձը սովորողների դաստիարակության գործում: Աշխարհագրության ուսուցման գործընթացում դաստիարակչական խնդիրների լուծման համար առաջատար դերը պատկանում է գիտական աշխարհայացքի ձևավորմանը:

## **РОЛЬ ШКОЛЬНОГО ПРЕДМЕТА «ГЕОГРАФИЯ» В ВОСПИТАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ**

**Григорян В. В.**

Школьный предмет «География» играет уникальную роль в учебном и воспитательном процессе. География, изучая экономические явления и общественные процессы, их территориальное распределение и взаимовлияние, расширяет мировоззрение, мировосприятие учащихся, а также дает этим явлениям научное объяснение.

**Ключевые слова:** географическое мировосприятие, географическое мышление, профессиональное мышление, динамическое развитие, страноведение.

## **THE ROLE OF SCHOOL GEOGRAPHY SUBJECT IN THE CONTEXT OF STUDENT UPBRINGING**

**Grigoryan V. V.**

School geography has exceptional educational role. The study of the geography of economic phenomena and social processes, their spatial

distribution and mutual effects that expand the worldview of students, outlook, giving these phenomena and processes a scientific explanation.

**Keywords:** geographical outlook, geographical judgment, professional judgment, dynamic development, Nature study.

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավագյան Գ. Ե. Հայկական ՍՍՀ աշխարհագրություն: Ուսուցման մեթոդիկա: Երևան: «Լույս»: 1983: 128 էջ:
2. Գրիգորյան Վ. Վ. Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի անցկացման մի քանի հարցերի շուրջ:// Մանկավարժական միտք: 2013: N 3-4: էջ 72-78:
3. Բարանսկի Յու. Կ. Մանկավարժություն: Ուսումնական ձեռնարկ: Մանկավարժական ինստիտուտի ուսանողների համար: Երևան: «Լույս»: 1986: 371 էջ:
4. Վալեայան Լ. Հ., Հովհաննիսյան Գ. Ժ. Հանրակրթական դպրոցի «Աշխարհագրություն» առարկայի հայեցակարգ: Աշխարհագրություն, Հայաստանի աշխարհագրություն, 4-10-րդ դասարանների ծրագրեր: Երևան: 1996:
5. Герасимова Т. П. Воспитание на уроках географии. Москва. Изд-во Высшая школа. 1965. 211 с.

#### **Տեղեկություններ հեղինակի մասին**

**Գրիգորյան Վ. Վ.** – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Երևանի պետական համալսարան, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ

Էլ. փոստ՝ [vahagn.grigoryan.61@mail.ru](mailto:vahagn.grigoryan.61@mail.ru)

Տրվել է խմբագրություն՝ 07.10.2021

Գրախոսվել է՝ 15.12.2021